ALEXEY KUZNETSOV
Doctor of Economics, Corresponding Member of RAS

INION RAN ON THE BACKGROUND OF THE NEW STANDARDS FOR PUBLICATION ACTIVITY OF RUSSIAN SCIENTISTS

The article is devoted to the current situation of one of the leading Russian academic institutions - Institute of Scientific Information for Social Sciences of the Russian Academy of Sciences (INION RAN). Adaptation to the new standards for the publication activity of Russian scientists of INION RAN two main areas of specialization - research and library-bibliographic work is considered. Particular attention is paid to the advantages and disadvantages of assessing scientists and organizations in the social sciences by science-based indicators.

A critical analysis of the current state policy of predominant use in the assessment of Russian scientists of the science-based instruments developed in the USA (Web of Science, DOI index, etc.) is given. More adequate measures are proposed to evaluate the publication activity of Russian scientists and the possible place of INION RAN in their implementation is shown.

Հոդվածը ներկայացվել է տպագրության 01.08.2019թ.,
ուղարկվել է գրախոսության 12.08.2019թ., ընդունվել է տպագրության 12.09.2019թ.:

ՀՏԴ 82+32

ԱԼՎԱՐԴ ՍԵՄԻՐՋՅԱՆ-ԲԵՔՄԵՋՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՊՈՊՈՒԼԻԶՄԸ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համառոտագիր

Կարո՞ղ է արդյոք գեղարվեստական գրականությունը լինել պոպուլիստական՝ դառնալով «գործիք» իշխող դասակարգի ձեռքում՝ հասարակությանը, մասսաներին գաղափարապես ուղղորդելու նաև մանիպուլյացնելու քաղաքական նպատակադրմամբ, որքանո՞վ է գրականությունը մասնակից դառնում պոպուլիստական գաղափարախոսության ձևավորմանը և տարածմանը, և, վերջապես, հնարավո՞ր է արդյոք, որ գրականությունն ինքն իրենով լինի պոպուլիստական: Այս հարցադրումներին ըստ էության պատասխանելու համար հարկ է նաև հասկանալ, թե ինչ է նշանակում «պոպուլիզմ» ժամանակակից աշխարհում: Պոպուլիզմ բառի կիրառությունը հայ իրականության մեջ հատկապես մեծ տարածում գտավ 2018 թվականի ապրիլյան հեղափոխության ընթացքում և դրանից հետո, և սա հետաքրքիր է նաև նրանով, որ որոշակի կապ է ստեղծվում Հայաստանի և համաշխարհային «պոպուլիստական» միտման միջև:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ *գրականություն, պոպուլիզմ, սոցռեալիզմ, պոպ-արտ, հեղափոխություն:*

Պոպուլիզմը ժամանակակից աշխարհի ամենակիրառական և տարածված բառերից մեկն է դարձել: Խնդիրը պայմանավորված է քաղաքական, սոցիալական իրողություններով, որոնք իրենց արձագանքն են թողնում նաև արվեստաբանության և գրականագիտության բնագավառներում: Պոպուլիզմ բառը

մեկնելի է հիմնականում երկու մոտեցմամբ՝ ավանդական և ժամանակակից: Ըստ ավանդական ընկալման՝ պոպուլիզմը մեկնաբանվում է որպես **ամբոխավարություն, էժանագին ժողովրդավարության պատրանք, ժողովրդահաճություն:** Այլ են պոպուլիզմի մասին ժամանակակից ընկալումներն ու սահմանումները, ըստ այդմ՝ պոպուլիզմն ընկալվում է որպես գաղափարաբանություն՝ ուղղված հասարակության ցածր սոցիալ-տնտեսական խավերին, անցյալի պոպուլիզմի ընդհանուր հատկանիշների կուտակմամբ [1]: Ժամանակակից պոպուլիզմը նաև հակադրությունն է էլիտիզմին, ըստ որի՝ ժողովուրդը դիտվում է որպես վտանգ և այն պետք է ղեկավարվի էլիտայի միջոցով [2]: Եվ կամ պոպուլիզմը քաղաքականություն է սովորական ժողովրդի համար, որը վարում են արտասովոր (extraordinare) առաջնորդները՝ ստեղծելով պարզության, սովորականության, հասարակության պատրանք [3, էջ13]: Ըստ վերոնշյալի՝ պոպուլիզմը ավանդական ընկալմամբ հանդես է գալիս որպես ոճ՝ հռետորաբանություն, ըստ ժամանակակից ընկալման՝ որպես նեղ գաղափարախոսություն՝ իր երկու թևերով՝ աջ պոպուլիզմ և ձախ պոպուլիզմ: Ըստ երկրորդ սահմանման՝ որպես նեղ գաղափարախոսություն, պոպուլիզմը կառուցվում է դիխատոմիայի՝ հակադրության վրա՝ մենք և նրանք՝ հասարակ, մաքուր ժողովուրդը և քաղաքական, կոռումպացված էլիտան: Սակայն այս հակադրությունը երբեմն հիմնվում է ոչ միայն ազգային պայմանների և սահմանների վրա, այլ քաղաքակրթական բևեռների, ինչը շատ բնորոշ է հատկապես արևմտյան քաղաքակրթություններին, հատկապես երբ խոսքը քրիստոնեություն և իսլամիզմ հակադրության մասին է, օրինակ՝ պոպուլիստական բնույթ կրող այնպիսի շարժումներ, ինչպիսիք են Քրիստիանիզմը (Christianism), սեկուլյարիզմը (secularizm՝ աշխարհիկություն) և լիբերալիզմը [3, էջ17-18]: Տեսաբանները ժամանակակից պոպուլիզմի նախադրյալները կապում են քաղաքական որոշ իրադարձությունների, մասնավորապես բրիտանական Brexit-ի քվեարկության և ԱՄՆ-ում Դոնալդ Թրամփի նախագահ ընտրվելու փաստերի հետ: Ըստ այդմ՝ 2017 թվականին **պոպուլիզմ** բառը Քեմբրիջի բառարանում հռչակվում է տարվա բառ: Առաջանում են նոր ձևակերպումներ, որոնք անմիջականորեն առնչվում են պոպուլիզմ երևույթի հետ, օրինակ՝ Չավիզմը (Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսի անվամբ), երևույթ, որն ընդգրկում է սոցիալիզմը և պոպուլիզմը, Օրբանիզմը (Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանի անունով), մեկնաբանվում է որպես պոստկոմունիստական պոպուլիզմ, որը ավտորիտարիզմի և նատիվիզմի խառնուրդն է [3, էջ16]: Պոպուլիզմ բառի կիրառությունը հայ իրականության մեջ հատկապես մեծ տարածում գտավ 2018 թվականի ապրիլյան հեղափոխության ընթացքում և դրանից հետո: Այս կապակցությամբ բավական է միայն որոնել «պոպուլիզմ» բառը youtube-յան հարթակում. «Փաշինյանը վարչապետ դառնալու համար կարող է անդամագրվել ՀՀԿ-ին, մնացած քայլերը պոպուլիզմ է»: «Սա բռնապետությունից դեպի ժողովրդավարություն գործընթաց էր. պոպուլիզմի դոզան պետք է թուլացնել», «Փաշինյանի պոպուլիզմի դոզան «բիզ է սրել». ժողովրդական հուզումներ են հասունանում» և այլն: Ըստ էության, ժամանակակից հայ իրականության մեջ

պոպուլիզմը շարունակում է մնալ զուտ որպես հռետորաբանություն՝ կիրառվելով իր ամենանախնական իմաստով: Բացառություն կարելի է համարել «Բուն TV»-ի՝ «Պոպուլիզմը և պրոպագանդան Հայաստանում՝ ի ցույց» թեմայի շրջանակներում կազմակերպած դասախոսությունների շարքը: Այս առումով նաև ուշագրավ է Հրանտ Տէր-Աբրահամեանի «Այս քաղցր բառը՝ պոպուլիզմ» հոդվածը, որում հեղինակը փորձում է արդիական հարցադրումների տեսանկյունից մեկնաբանել վերջին շրջանում այդքան շատ շահարկվող պոպուլիզմ երևույթը. «Ի՞նչ բան է վերջապես այդ չարաբաստիկ պոպուլիզմը: Հիմքում լատիներեն «populus»՝ «ժողովուրդ» բառն է: Այսինքն՝ պոպուլիզմ նշանակում է պարզապես ժողովրդականություն: **Զարմանալի քաղաքական հայհոյանք է մի դարի համար, որի պաշտոնական դավանանքը ժողովրդավարությունն է:** Ինչո՞ւ է «ժողովրդականությունը» ոչ միայն պարզապես վատ բան (ինչը նույնպես զարմանալի կլիներ), այլև առավել պարսավելի, բացասական քաղաքական գնահատականը «ժողովրդավարության» դարում: Ինչպե՞ս կարող է ժողովրդականությունն իրոք այդքան հակադիր լինել ժողովրդավարությանը: Այստեղ մի գաղտնիք պետք է լինի, մի քողարկված դրամա, նույնիսկ **ողբերգություն՝ կատակերգության երանգներով**…Հետաքրքիր կապ է ստեղծվում Հայաստանի և համաշխարհային «պոպուլիստական» միտման միջև: **Ոչինչ տեղի չի ունենում իր ժամանակից դուրս և իր ժամանակի ոգուն հակառակ**: Հայկական հեղափոխությունը համընկավ աշխարհում մթնոլորտի փոփոխության հետ: Նույնիսկ աշխարհի թիվ մեկ պետությունում իշխանության է եկել «պոպուլիստը»: Այսինք՝ Ամերիկայի ժողովուրդը «սխալ» ընտրություն է կատա-րել: Եթե ճիշտ ընտրություն կատարեր, ընտրյալը կլիներ «դեմոկրատ», բայց սխալ ժողովրդական ընտրությունը «պոպուլիզմ է»: Մեզ ամենևին կարևոր չէ տվյալ դեպքում Թրամփի լավ կամ վատ լինելը, մենք անձերին չենք քննարկում, այլ միտումները և կառուցվածքները…Իրական խնդիրը, իհարկե, պարզ է: Սա «**ավգուրների ժպիտի»** խնդիրն է կամ «թագավորը մերկ է» հեքիաթը: Ավգուրները հին հռոմեական քրմերի դաս էին, որոնք պետական կարևոր հարցերով գուշակություններ էին անում թռչունների թռիչքին հետևելով: Սա ավանդաբար համարվում էր պետական բարձր գործառույթ, դրա համար ավգուրներ էին լինում բարձրաստիճան պաշտոնյաները և լավագույն ընտանիքների որդիները: Հռոմի ծաղկման շրջանում, բնականաբար, ոչ ոք լուրջ չէր հավատում, որ թռչունների թռիչքի դիտարկուների արդյունքներով կարելի է լուրջ պետական հարցեր լուծել: Բայց ավանդույթը պահպանվում էր, և ըստ Կիկերոնի (Քոչարյանի ֆեյքերի լեզվով՝ Ցիցիռոնը), որն ինքն էլ ավգուր էր եղել, քրմերը ծեսն իրացնելիս չէին կարողանում զսպել ժպիտները՝ միմյանց նայելիս» [4]:

Մեզ հետաքրքրող մյուս խնդիրն այն է, թե ինչպես են հարաբերվում պոպուլիզմը և մշակույթը: Ըստ Յանսմա Յուդիթի (Jansma Judith)՝ պոպուլիզմը «մերժում է մշակույթը»՝ համարելով այն ժամանակի և փողի անիմաստ վատնում: Այնինչ, մշակույթը ընկալում է պոպուլիզմը որպես իրեն հակասող, իրեն օտար տարր, երևույթ: Այս տեսանկյունից մշակույթը հաճախ միջոց է

ավելի լավ հասկանալու, ընկալելու և ըմբռնելու համար պոպուլիզմի օրինաչափությունները և վտանգները [3]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պոպուլիզմի գաղափարախոսության ուժեղացումը տարբեր երկրներում ուղեկցվում է գեղարվեստական գրականության անմիջական արձագանքով, այսպես՝ ԱՄՆ-ում 2016թ. նախագահական ընտրություններից հետո Ջ. Օրուելի «1984» անտիուտոպիան ամազոնյան լավագույն վաճառված գրքերի ցուցակում երկար ժամանակ համարվում էր բացարձակ առաջատարը: Նման մեծ արձագանք ստացավ Ֆրանսիայում Միշել Ուելբեքի «Հնազանդություն» վեպը: Նմանատիպ «գրքային բում» առաջացավ Նիկոլ Փաշինյանի «Երկրի հակառակ կողմը» վեպի կապակցությամբ Հայաստանում*:

Պոպուլիզմ և գեղարվեստական գրականություն փոխհարաբերության հարցում մեզ առավելապես հետաքրքրում է երեք հարց.

ա. հնարավո՞ր է արդյոք գրականությունը, դառնալով գործիք իշխող հասարակարգի ձեռքում, ձեռք բերի պոպուլիստական շեշտադրումներ՝ զանգվածներին գաղափարապես մանիպուլյացնելու, ուղղորդելու քաղաքական նպատակադրմամբ,

բ. որքանո՞վ է գրականությունը մասնակից դառնում պոպուլիստական գաղափարախոսության ձևավորմանը և տարածմանը,

գ. հնարավո՞ր է արդյոք, որ գրականությունն ինքնին լինի պոպուլիստական:

ա. Առաջին հարցադրման համատեքստում մենք, թերևս, կանդրադառնանք «Սոցիալիստական ռեալիզմ»-ին. ուղղություն, որն առաջին անգամ իր մասին ազդարարել է 1923թ. մայիսին «Լիտերատուրնայա գազետա» թերթի համարներից մեկում: Թերթը զետեղել է ***«Ապահովենք գրական խմբակների ստեղծագործական գործունեության բոլոր պայմանները»*** տեղեկատվությունը, որում մասնավորապես ասված է. «Մեթոդի մասին հարցն անհրաժեշտ է վերացականորեն չներկայացնել, այդ գործին չմոտենալ այնպես, որ գրողը նախ պարտադրաբար անցնի դիալեկտիկական մատերիալիզմի դասընթացները, հետո նոր ստեղծագործի: Գրողներին առաջադրվող հիմնական պահանջն է՝ գրել ճշմարտության մասին, ճշմարտացիորեն արտացոլել մեր իրականությունը, որ ինքնին դիալեկտիկական է: Ուստի՝ խորհրդային գրականության հիմնական մեթոդը սոցիալիստական ռեալիզմն է» [5, էջ 249]:

Սոցռեալիզմի գեղագիտական նպատակն էր՝

- Սոցիալիստական անհատականության դաստիարակությունը (Գորկի):
- Իրականության ճշմարտացի, կոնկրետ-պատմական արտացոլումը՝ նրա հեղափոխական զարգացման մեջ:
- Անցյալի թունավոր, մղձավանջային նողկանքի լիովին լուսաբանումը:

---

* Գիրքը լույս է տեսել 2018թ. մայիսի 31-ին: Գրեթե մեկ տարի անց էլ գիրքը շարունակում է մնալ լավագույն վաճառվող գրքերի ցուցակում բացարձակ առաջատարը: Մինչ օրս վաճառվել է գրքի 7000 օրինակ:

• Հպարտ ուրախ պաթոսի արթնացումը, որը գրականությանը նոր երանգ պիտի հաղորդեր:

Սոց-ռեալիզմի պոպուլիստական երագները դրսևորվում էին նաև հետևյալում՝ և' արվեստում, և՛ մշակույթում պետք է գործեր մեկ հիմնական սկզբունք՝ նա, ո՛վ մեզ հետ չէ, մեզ դեմ է, ինչը և թույլ տվեց մարքսիստներին հաղթած երկրներում իշխանության գալուց հետո ստեղծագործող մտավորականության նկատմամբ իրականացնել ճնշումներ, հալածանքներ, նրանց պիտակներ կպցնել, սահմանափակել ազատասիրության և հումանիզմի դրսևորումները [5]:

բ. Ըստ երկրորդ հարցադման՝ այն է, թե որքանով է գրականությունը մասնակից դառնում պոպուլիստական գաղափարախոսության ձևավորմանը և տարածմանը, որոշ վերլուծաբաններ կարծում են, որ գրականությունը կարող է «վառելանյութ» հանդիսանալ քաղաքական պոպուլիստական գաղափարախոսության համար, օրինակ՝ Միշել Ուելբեքի «Հնազանդություն» վեպի** ազդեցությունը Մարին Լը Պենի (Marine Le Pen) նախընտրական քարոզարշավի ժամանակ: «Հնազանդություն», ոչ թե բորբոքող խոսքեր են, այլ համոզիչ տեսություն՝ եվրոպական քաղաքակրթության, նրա մշակույթի և նրա դեմոկրատիայի ավարտի մասին (Begle) [3]: Այս կապակցությամբ հետաքրքիր է հենց Ուելբեքի խոստովանությունը, ըստ որի. «Պոպուլիզմ բառը հորինվել է, իսկ ավելի ճիշտ նորոգվել է, քանի որ այլևս անհնար էր որոշ կուսակցությունների մեղադրել ֆաշիզմի մեջ, ինչը կլիներ շատ սխալ: … Այսպիսով, նոր անարգանք է ստեղծվում՝ պոպուլիզմ: Այո, կարծում եմ, որ ես պոպուլիստ եմ: Ես ուզում եմ, որպեսզի ժողովուրդը լուծի բոլոր հարցերը» [3, էջ 41]:

Հայ իրականության մեջ, թերևս, այդպիսի «վառելանյութի» դեր կատարեց Ն. Փաշինյանի «Երկրի հակառակ կողմը» վեպը, որն, ինչպես գիտենք, նաև հանդիսացել է հեղափոխության դրդապատճառներից մեկը. «2018 հունվար…Վեպի ընթերցումը 10 տարի անց ինձ տակնուվրա արեց պարզապես: Իմ ներսում մի իսկական փոթորիկ սկսվեց, մի իսկական հեղափոխություն: Եվ հասկացա, որ ժողովրդի հաղթանակի ժամը եկել է»[6]: Վեպն ամբողջովին կառուցված է դիխատոմիայի սկզբունքի վրա՝ գեղարվեստական մակարդակում հակադրելով բարձր և ցածր գաղափարները, իսկ քաղաքական մակարդակում՝ հակադրելով մենք և նրանք պոպուլիստական գաղափարաբանության սկզբունքը՝ «Մենք պետք է կերտենք մեր ազատ հայրենիքը, մենք պետք է կերտենք մեր Հայրենիքի ապագան»:

Բայց սպասեք, ովքե՞ր են այդ ***«Մենքը»*** *(ընդգծումը մերն է-Ա.Ս-Բ),* ովքե՞ր են մտնում նրա կազմի մեջ: Գուցե «Իմպիչմենտ» դաշինքում ներգրավված ուժերը՝ «ՀՀՇ»-ն, «ՀԺԿ»-ն, գուցե «Հանրապետությունը» կամ Հայ ազգային կոնգրեսում

** Վեպը զարմանալի զուգադիպությամբ լույս է տեսել 2015թ-ի հունվարի 7 –ին, ճիշտ այն օրը, երբ Ալ Քաիդան կատարեց ահաբեկչական հարձակում ֆրանսիական «Չարլի Հեբդո» օրաթերթի վրա, ինչի արդյունքում մահացան 12 աշխատակից: Հենց այդ իսկ օրը թերթի համարը լույս էր տեսել Ուելբեքի նկարով, որի տակ գրված էր՝ «2022-ին ես արեցի «Ռամադան»:

ներգրավված ուժերը: Ինչպիսի անհեթեթությու՛ն: Մտքերի ինչպիսի՛ զազրելի ընթացք, ինչպիսի՛ գայթակղություն, որին անհուսալիորեն տրվել են այսօր Հայաստանում իշխողները: Նրանք՝ կոալիցիայի մեջ մտած ուժերը և նրանց ուղղակի և անուղղակի սատարողները ուրիշ բան չեն անում, նրանք կառուցում են իրենց երազած երկիրը, «Մենք կառուցում ենք մեր երազած երկիրը»-ասում են ***նրանք:*** Ո՞րն է, ուրեմն, խնդիրը: Խնդիրն այն է, որ նրանց ասած «մենքի» մեջ մտնում են մի քանի կուսակցությունների վերնախավի ներկայացուցիչներ՝ օլիգարխներ, պալատական մտավորականներ: ***Նրանց*** *(ընդգծումը մերն է-Ա.Ս-Բ)* Մենքի մեջ 10000, լավ 20000, լավ 100000 մարդ է մտնում, այն դեպքում, երբ երկիրն ունի 3000000 քաղաքացի, Հայաստանում կամ նրա սահմաններից դուրս: Նրանց կառուցած երկիրը համապատասխանում է այդ 100000 ցանկություններին: Դա 100000 երազած երկիրն է… Իսկ ովքե՞ր պետք է մտնեն «Մենք»-ի մեջ. Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի…Մեր երազած երկիրը երեք միլիոն մարդու երազած երկիրն է, և այդ երեք միլիոնից յուրաքանչյուրը պետք է ունենա իր երազանքի մասին բարձրաձայնելու, իր երազանքը ուրիշների երազանքին խառնելու, ընդհանուր երազանքին խառնելու, ընդհանուր երազանքի ձևավորմանը մասնակցելու ազատություն և հնարավորություն»[6, էջ 65-67]:

գ. Անդրադառնալով երրորդ հարցադրմանը՝ գրականության ինքնին պոպուլիստական լինելու հանգամանքին, հարկ է դիտարկել պոպ-արտ երևույթը, որը արվեստի և գրականության պոպուլիզացիայի հիմնական ձևերից մեկն է: Պոպ-արտը (popular-populus՝ բոց. ժողովրդական, հանրամատչելի արվեստ) առաջացել է ԱՄՆ-ում 1950-ական թվականներին: Պոպ-արտը ***հակադրվում է էլիտար՝*** անառարկա, աննյութական արվեստին, հռչակում է վերադարձ իրականության սկզբունքը: Հիմքում ընկած է ***վավերագրականության սկզբունքը՝*** իրականությունը ներկայացնել իր լուսանկարչական, վավերագրական ճշգրտությամբ: Պատկերման հիմնական առարկան են դառնում իրական, անվանի մարդիկ, իրադարձությունների հանրածանոթ, տպագիր պատկերներ և այլն: «Սակայն պոպ-արտ-ը, ինչպես և նրան պատմականորեն նախորդած մոդեռնիզմի հոսանքները, ներփակված է ինքնաբավ ձևական փորձերի շրջանակում և նույնպես հեռու է իրականության ռեալիստական վերապատկերումից և, ըստ էության, ***հակարվեստ է*** [7]: Ինչպես տեսնում ենք, գրականությունը և արվեստը մոդելավորող համակարգեր են, նկատի ունենք այն, ինչ սկիզբ է առել արվեստում, մի քանի տասնամյակ հետո նոր միայն բացահայտ դրսևորվում է քաղաքական-հասարակական կյանքում: Պոպ-արտի հիմնական սկզբունքներից են նաև հակաէլիտիզմը: Մարկո Բարավալլը (Marco Baravalle)վկայում է, որ դոկումենտալությունը և հակաէլիտիզմը պոպուլիզմի դրսևորումներից են գեղարվեստական գրականության և արվեստի մեջ [8]: Արվեստում պոպուլիստական ձևերի կիրառումը սովորաբար հանգեցնում է հակաինտելեկտուալ կողմնորոշման՝ ազգային ֆոլկլորի պարզունակ կիրառումներով [3]: Վերոնշյալի համատեքստում ուսումնասիրելով հայ գրականության մեջ վերջին իրողությունները՝ ակնհայտ է դառնում վավերագրականության, հակաէլիտիզմի և

ֆոլկլորային տարրերի հաճախակի կիրառումը գրական տեքստերում: Այսպես՝ ակնհայտ վավերագրականության տարրեր են պարունակում Կարեն Ղարսլյանի վերջին՝ «Ռեժիմը խուճապի մեջ է» **վավերագրական** տրագի-կոմեդիան (2019), Հովհաննես Թեքգյոզյանի «Երրորդ սեռ» **«կիսադոկումենտալ»** պատմություններով չորս գործողությամբ վեպը, Վարդան Դանիելյանի «Դոկումենտալ պոեզիա» ժողովածուն (2018)

Մենք, որ միշտ հենվում ենք մետրոյի դռներին,
քանի որ երկրում ուրիշ հենարան չկա,
մենք, որ միշտ մոլորվում ենք
Բարեկամության գետնանցումում,
ուր բրազիլիական սուրճ աղալն անվճար է,
մենք, որ սովոր ենք միտինգներին կանգնելուն,
քանի որ ամեն օր մարշրուտկեքում կանգնած ենք,
մենք, որ փափագում ենք նստել
նույն այդ մարշուտկում ու չնստել
միտինգից հետո
մենք ապրում ենք մի երկրում,
ուր հանրապետականները հիվանդանոց չեն գնում
Քանի որ Հանրապետականը հիվանդանոց է:

[9, էջ 23]

Ակնհայտ վավերագրական շեշտադրում ունի Արփի Ոսկանյանի՝ հեղափոխության օրերի ընթացքում ստեղծած «Հեղափոխություն» շարքը, որը զուգահեռաբար լույս էր տեսնում «Հրապարակ» թերթի մշակութային հա-վելվածում, իսկ նույն հեղինակի դեռևս 2012 թվականից համացանցում և մամուլում պարբերաբար հրապարակվող «Այն ո՞վ է, այն ո՞վ» քաղաքական հանելուկների շարքը, որը պոպ-արտին բնորոշ ազգային ֆոլկլորի պարզու-նակ իրացումներից է՝

Նա շատ նուրբ է ու շատ կիրթ է,
Սովորած դրսում,
Եզերի հետ բռի, բիրտ էն
Նիստի է նստում:
Նախագահի համար եղել
Մամուլի խոսնակ,
Լրագրողին ծեծ է տվել,
Ինչպես մի բոսյակ:
Բայց վաղուց ընդդիմադիր է,
Կանգնած է հերթի,
Նրա կինը խմբագիր է
Մի հայտնի թերթի:
Գրողներ էին պապն ու տատը
Եվ աներն էր գրող,
Համեստությամբ բայց մի հատ է՝
Լուռ համակարգող:

Բանագնացն էր մարդկանց մոտ
Չաղ ու բախտավոր,
Բայց աղոտ էին ու մշուշոտ
Հույսերը բոլոր։
Իսկ ռեժիմը գտնվում է
Դեռ խուճապի մեջ,
Ճաք է տված իշխանական
Բուրգը սնամեջ։

[10]

Նույն դոկումենետալության միտումն ունեն Մարինե Պետրոսյանի գրեթե ամեն օր գրվող «բանաստեղծական» տեքստերը՝

Էսօր, երբ գրում եմ էս տողերը
2019 թվի մայիսի 17-ն ա
Քոչարյանի խափանման միջոցի հարցով
դատական նիստը շարունակվում ա
չեմ ուզում նայել, տհաճ ա
բայց որոշ կադրեր, մեկ ա, նայում եմ
Հայաստանի 2-րդ նախագահը ոնց որ դինոզավր լինի
տխուր ա։

[11]

Հարկ է նշել, որ հայ նորագույն գրականության մեջ վավերագրականության, հակաէլիտիզմի, ֆոլկլորային տարրերով հագեցած տեքստեր սկսել է գրել Արմեն Շեկոյանը «Անտիպոեզիա»(2000թ.)գրքում, «Երևան Հյուրանոց» (2000-2001թ.) պոեմում, ինչպես նաև «Հայկական ժամանակ» վեպում։

Ինձ մի քիչ գիտեր Գեղամ Սարյանը,
ինձ շատ լավ գիտեր Համո Սահյանը,
ինձ մի քիչ գիտեր ինքը՝ Գորիկը,
ինձ շատ լավ գիտեր Դքի Նորիկը,
ինձ գիտի Սոսը, գիտի Խորիկը,
գիտի Սերոժը, գիտի Բորիկը,
գիտեն Լիպոն ու Ղումարբազ Ճանը,
գիտեին Նանսենն ու Դեմիրճյանը,
որ էս վայրերում մեզ նման հուսաց.
նա մի բան գիտեր, սակայն ինձ չասաց։

[12, էջ 284]

Այսպիսով՝ գրականությունը, դառնալով գործիք իշխող հասարակարգի ձեռքում, կարող է ձեռք բերել պոպուլիստական շեշտադրումներ, նաև կարող է մասնակցել պոպուլիստական գաղափարախոսության ձևավորմանը և տարածմանը, ինչպես նաև գրականությունն ինքնին կարող է լինել պոպուլիս-

տական: Միևնույն ժամանակ, գրականությունը և՛ իրականությունն արտացոլող և վավերացնող երևույթ է, և՛ ապագա զարգացումները կանխատեսող և մոդելավորող համակարգ է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Müller Jan-Werner**, What Is Populism? (2016) https://pdfs.semanticscholar.org/7450/fc0d0fc73e2154078834014828139edcdff6.pf
2. **MUDDE, Cas; KALTWASSER, Cristóbal Rovira**, Populism: A very short introduction. Oxford University Press, 2017 https://www.academia.edu/37274391/MUDDE_Cas_KALTWASSER_Crist%C3%B3bal_Rovira._Populism_A_very_short_introduction._Oxford_University_Press_2017
3. **Jansma Judith**, Populizm and literature, 2018
4. **Տէր-Աբրահամեան Հ.,** «Այս քաղցր բառը՝ պոպուլիզմ» https://168.am/2018/09/02/1003613.html
5. **Միրզախանյան Ռ. Կ.,** Սոցիալիստական ռեալիզմ, http://lraber.asj-oa.am/6169/1/249.pdf
6. **Փաշինյան Ն.,** Երկրի հակառակ կողմը, Եր., 2018
7. https://hy.wikipedia.org/wiki/%D5%93%D5%B8%D6%83_%D5%A1%D6%80%D5%BF
8. **Baravalle M**, Art Populism and the Alter-Institutional Turn https://www.e-flux.com/journal/89/182464/art-populism-and-the-alter- institutional-turn/
9. **Դանիելյան Վ.,** Դոկումենտալ պոեզիա, 2018
10. **Ոսկանյան Ա.,** «Այն ո՞վ է, այն ո՞վ» https://armtimes.com/hy/article/100224
11. https://www.facebook.com/marine.petrossian
12. **Շեկոյան Ա.,** Երևան հյուրանոց, Եր., 2003

АЛВАРД СЕМИРДЖЯН-БЕКМЕЗЯН

кандидат филологических наук, доцент

ПОПУЛИЗМ И ХУДОЖЕСТВЕННАЯ ЛИТЕРАТУРА

В статье рассматриваются современные представления, проявления и взаимодействие популизма с культурой, в частности, с литературой. Были рассмотрены, главным образом, три вопроса в контексте популизма и литературы: литература, становящаяся инструментом в руках правящего класса, может приобрести популистские акценты, литература может участвовать в формировании и распространении популистской идеологии, и наконец, сама литература может быть популистской. В то же время литература как феномен документирования и отражения реальности также является системой планирования и кодирования одной и той же реальности.

ALVARD SEMIRJYAN-BEKMEZYAN

PhD in Philological Sciences, Associate Professor

POPULISM AND FICTION

The article deals with contemporary perceptions, manifestations and the interaction of populism with culture, in particular, with literature.

Three issues are mainly considered in the context of populism and literature: literature, becoming an instrument in the hands of the ruling class, can acquire populist accents, literature can participate in the formation and dissemination of populist ideology, and finally, literature itself can be populistic.